

Ախալքալաք, 30 յուլիսի

«Մշակի» ընթերցողները արդէն մի քանի անգամ առիթ են ունեցել կարդալու մեր գլխաւորի գիւտի 1500-ամեակի և հայկական տպագրութեան 400-ամեակի յօրելեանի վերաբերմամբ ծագած վէճի մասին՝ Թիֆլիսի և Էջմիածնի յանձնաժողովների միջև, որը և շարունակվում է ու կը շարունակվի... Գոնէ շատ հետաքրքրական է մեզ, թէ արդեօք Թիֆլիսի յանձնաժողովը ձվ է ընտրել, և ինչ իրաւական մարմին է հանդիսանում: Էջմիածնի յանձնաժողովը գոնէ հասկանալի է՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսից ճանաչված:

Զէ որ Կաթողիկոսը կարող է հայոց թէ միջնակարգ և թէ տարրական դպրոցներին կօնդակներով պատուիրել Էջմիածնի յանձնաժողովի որոշած ժամանակին (հոկտեմբերի 13) տօնը կատարել. և այն ժամանակ ինչ դրութիւն կը ստեղծվի...

Վերջապէս մեզ ամենից հետաքրքրականը և կարևորը ներկայումս «դպրոցական ֆօնդն է» և ոչ թէ «գրական ֆօնդը»: Իմ կարծիքով այս վէճը կը վերանայ մէջտեղից, եթէ բոլոր հայկական գաւառների մեծամասնութիւնը միանայ այս կամ այն յանձնաժողովին, որի իրագործման համար կարող է գեղեցիկ օրինակ լինել Ախալքալաքը:

Յուլիսի 28-ին տեղիս գործակալի հրաւիրանօք ժողով կայացաւ ծխ. դպրոցի գահլիճում վերոյիշեալ յօրելեանի առիթով:

Ժողովը միաձայն նախագահ ընտրեց Գէորգ Ալթունեանին և խնդրեց նրան, որ իրան ծանօթացնէ գրերի գիւտի և հայկական տպագրութեան պատմութեան հետ:

Պէտք է ասել, որ Ալթունեանը համառօտ, բայց գեղեցիկ կերպով ծանօթացրեց. նախագահը այնուհետև վիճաբանութեան նիւթ դարձրեց, թէ արդեօք ո՞ր յանձնաժողովի որոշած տօնակատարութեան ժամանակի և, որ զլիսաւորն է, նպատակի հետ միանալ, արդեօք Էջմիածնի յանձնաժողովի «Դպրոցական ֆօնդն» է մեզ համար աւելի կարևորը, թէ Թիֆլիսի «Գրական ֆօնդը»:

Երկար վիճաբանութիւնից յետոյ ժողովը եկաւ այն եզրակացութեան, որ ներկայումս հայ ժողովրդի համար աւելի անհրաժեշտ է «Դպրոցական ֆօնդը»՝ օրինակ ունենալով հէնց մեր գաւառը, որը ունենալով 70 գիւղ հայ բնակչութիւն ունի ընդամենը 6 դպրոց: Ժողովը միաձայն որոշեց միանալ Էջմիածնի յանձնաժողովին:

Այնուհետև ժողովը ընտրեց 5 հոգուց բաղկացած մի յանձնաժողով: Տեղացի